ՀԻՆԳՀԱԶԱՐԱՄՅԱ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Մարտիկյան

Ժամանակակից պատերազմները հասարակական բարդ երևույթներ են: Հակամարտող կողմերն օգտագործում են պայքարի տարբեր ձևեր, իսկ զանգվածային ոչնչացման զենքի նորանոր տեսակների վրա կատարվող ուսումնասիրությունները ստիպում են նորովի գնահատել պատերազմի ժամանակ զինված մարդու գործողությունների տրամաբանությունը: Պահանջվում է նոր որակում գտնել այնպիսի դժվար բնութագրվող հասկացության համար, ինչպիսին ռազմական հանցագործությունն է: Այս ամենով է զբաղվում «Զինված ընդհարումների իրավունք» (ԶԸԻ) գիտությունը [1]:

Ներածություն

Նորանկախ Հայաստանի Հանրապետության իշխանությունները կարևոր քայլեր ձեռնարկեցին Կարմիր խաչի միջազգային կազմակերպության հետ սերտ հարաբերություններ հաստատելու, միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) և հատկապես նրա մասը կազմող ԶԸԻ ժամանակակից գործող սկզբունքներին (Ժնևի և Հաագայի կոնվենցիաներ, Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություններ) հանրապետության ռազմահիրավական համակարգը համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, լուսավորչական աշխատանք է ծավալվել այս գաղափարները տարածելու նպատակով:

Մեր իրականության մեջ, սակայն, կա մտահոգություն, որ հարևան երկրների կողմից վերը նշված սկզբունքները չընդունելը (հայտնի է ՄՄԻ նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների ծայրահեղ կանխակալ մոտեցումը) կարող է անբարենպաստ կացության մեջ դնել ՀՀ-ին:

Մինչդեռ բավական է ԶԸԻ նորմերը համեմատել մեր ռազմական պատմության տարբեր դրվագների հետ, որպեսզի պարզ դառնա, որ ՄՄԻ ժամանակակից համակարգին միանալու քաղաքականությունն այլընտրանք չունի: Այն ոչ միայն հիմնավորում է ՄՄԻ գործող համակարգին միանալու տեսակետը, այլև ցույց է տալիս, որ եթե դրանք հազարամյակներ շարունակ կիրառել են մեր նախնիները, ապա նոր գաղափար ընդունելու կամ չընդունելու խնդիր չկա: Ավելին, ժամանակակից ԶԸԻ հիմնարար սկզբունքների ընդունումը, թերևս, կարելի է դիտել որպես վերադարձ դեպի հայոց ռազմարվեստի ակունքները:

Պետք է նշել, որ աչքաթող է արված պատերազմում մարդասիրական

հարուստ ավանդույթներ ունեցող հայ ժողովրդի պատմության այս կողմի ուսումնասիրությունը [2, էջ 5-14]: Առհասարակ, մինչև օրս էլ շատ սահմանափակ է ներկայացվում պատերազմում մարդասիրական իրավունքի համաշխարհային պատմության վաղ շրջանը, և ուսումնասիրությունների հսկայական դաշտ կա: Այս հոդվածը վերոհիշյալ բացը լրացնելու փորձ է:

1. Հին աշխարհի մարդասիրական իրավունքը

Հայկական լեռնաշխարհի հարավային ու կենտրոնական շրջաններն ընդգրկող Արատտա պետության մասին առաջին հիշատակումները հանդիպում են շումերական սեպագիր արձանագրություններում (մ.թ.ա. XXVIII -XXVII դարեր): Դրանցում Հայկական լեռնաշխարհի բնակչության կողմից պատերազմների վարման սկզբունքների վերաբերյալ ակնարկներ կան, որոնք կարող են Հին Աշխարհի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանման բացառիկ սկզբնաղբյուր դառնալ: Այս առումով կարևոր է շումերական հերոսավեպը, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել Առաջավոր Ասիայի քաղաքական-իրավական համակարգում Արատտայի ունեցած դերի մասին:

«Էնմարքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգում, չնայած Շումերի և Արատտայի թշնամական հարաբերություններին, Արատտային բազմիցս տրվում է «սուրբ օրենքների երկիր» պատվանուն-մակդիրը: Իսկ «Գիլգամեշը և անմահների երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է գնալ «անմահների երկիր», այնտեղ փառաբանել իր անունն ու անմահանալ: Արատտան անվանվում է «անմահների երկիր» [3, էջ 15-17]: Ուշագրավ է, որ Արատտայի հետ թշնամական հարաբերություններ ունենալով հանդերձ, այն շումերների համար չի դադարում «սուրբ օրենքների երկիր» կոչվել:

Ավելի ուշ Միջագետքում իրենց տիրապետությունը հաստատած աքքադացիները (մ.թ.ա. XXIV-XXIII դարեր) ևս Եփրատի ու Տիգրիսի ակունքներում գտնվող լեռնային երկիրը (Հայկական լեռնաշխարհ) կոչում էին «Աստվածների ժողովի լեռ»[1]:

Հայտնի է, որ «Աստվածաշնչում» համաշխարհային ջրհեղեղի մասին հանրահայտ պատումում Նոյի տապանն իջնում է ամբողջ տարածաշրջանի (Փոքր Ասիա, Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Իրանական բարձրավանդակ) «տանիքը» համարվող Արարատի գագաթին[2]: Սա վկայում է, որ ոչ միայն հայերի, այլև հարևան ժողովուրդների կողմից Արարատը սրբացված է եղել նաև հետագայում:

Սարգոն I Հին թագավորի օրոք (մ.թ.ա. 2316-2251 թթ.) Աքքադի սահ-

[1] «Լեռ» բառի նշանը կարող է կարդացվել նաև «երկիր»: Այս մասին տե՛ս [3, էջ 27]:
[2] Տե՛ս Աստվածաշունչ, Ծննդոց, 8, 4:

մանները հասան Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքի Արմանում (Արմինա) երկրին, որը նվաճեց Սարգոնի թոռ Նարամ-Սուենը (մ.թ.ա. 2236-2200 թթ.): Արձանագրություններում Արմանումի նվաճումը «ներկայացվում է իբրև աննախադեպ երևույթ, որպիսին «մարդու արարումից ի վեր» չէր վիճակվել ոչ մի արքայի» [4, էջ 43-44]:

Իսկ ի՞նչն էր ստիպել, որ նախկինում թագավորած տիրակալները խուսափեն մի այնպիսի երկրի նվաճումից, որն առանձնապես աչքի չէր ընկնում իր ռազմական հզորությամբ: Մեր կարծիքով, Արատտայի իրավաժառանգորդը լինելով՝ Արմանումը շարունակում էր «սուրբ օրենքների երկիր» լինել: Այն կարելի էր նվաճել միայն խախտելով նախկինում ընդունված միջազգային հարաբերությունների նորմերը:

Ըստ մեզ՝ ավանդական իրավական համակարգը վերականգնելուն ուղղված միջոցառումներ են իրականացվում. Կարդու երկրից (հետագայում՝ Մեծ Հայքի Կորդուք գավառը) Աքքադի դեմ արշաված կուտիները կործանում են աքքադական տիրապետությունը:

Ա.Մովսիսյանն իր «Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը» աշխատությունում «Աքադի նզովումը» վեպում սրբապղծությունից զայրացած աստվածների նզովքի և լեռներից Աքքադի դեմ ուղարկված կուտիների զորքերի տեսարանի նկարագրությունը վերլուծելով՝ եզրակացնում է, թե այն շումերական քրմության դիմումով կուտիական զորքերի օգնության գալու պատմության վիպականացումն ու դիցաբանական գունավորումն է [5, էջ 12]:

Կուտիներին տասնյակ արյունահեղ ճակատամարտերում մեծագույն դժվարությամբ հաջողվեց տիրապետություն հաստատել ամբողջ տարածաշրջանում (Միջագետք, Սիրիա, Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ու հարավային մաս): Նրանց իշխանությունն աչքի էր ընկնում տասնամյակներ շարունակվող խաղաղությամբ: Առանց էական բարդությունների ամբողջ տարածաշրջանում անվրդով իշխելով՝ նրանք հանկարծ առաջին իսկ ոչ մեծ ճակատամարտում զիջում են իրենց դիրքերն ու վերադառնում իրենց լեռները:

Ինչո՞ւ կուտիներն իրենց իշխանությունը չդարձրին բռնապետություն, ինչո՞վ է պայմանավորված այս անսովոր մարդասիրությունը:

Մեր կարծիքով, շումերական և աքքադական արձանագրություններում պահպանվել են ապացույցներ, որ Հայկական լեռնաշխարհն ամբողջ տարածաշրջանում «սուրբ օրենքների» պահպանումը վերահսկողն էր: Իսկ եթե այդպես է, ապա Հին Աշխարհում գործել է միջազգային իրավունքի[1] յուրօրինակ համակարգ, որում աստվածային կարգը խախտած տիրակալ-

[1] Բացառված չէ նաև, որ այս համակարգն ընդգրկեր նաև քաղաքական, տնտեսական կամ այլ բնագավառ:

ները պատժվում էին իշխանությունից զրկվելով: «Օրենքների» պահպանման համար այն աստիճանի կուռ համակարգ էր ձևավորված, որ Արատտայի դեմ պատերազմելիս անգամ շումերները չեն զլանում կրկնել իրենց հակառակորդի կարգավիճակը:

Հավանաբար նույն պատճառով էր, որ տասնյակ արյունահեղ ճակատամարտերում մեծագույն դժվարություններ հաղթահարելով՝ Միջագետքում իրենց տիրապետությունը հաստատած կուտիները չփորձեցին խոչընդոտել իրենց դեմ ծագած ապստամբությանը և հեռացան դեպի իրենց երկիրը: Իսկ գուցե դրա պատճառն այն էր, որ «խաղաղապահ» ուժերը Միջագետքում այլևս անելիք չունեի՞ն:

Այդ դեպքում կարող ենք արձանագրել, որ կուտիները, իրոք, Միջագետք մուտք գործեցին օգնության նպատակով: Աքքադական բռնապետությունը տապալելով՝ նրանք ոչ միայն մտադիր չէին նմանատիպ իշխանություն ստեղծել, այլև այստեղ էին եկել շումերական (հավանական է նաև՝ տարածաշրջանային) ավանդական հոգևոր և աշխարհիկ կարգը վերականգնելու համար [5, էջ 15]:

Փաստորեն, շուրջ հինգ հազարամյակ առաջ Առաջավոր Ասիայում գոյություն ուներ միջազգային ռազմաիրավական համակարգ, ավելին, կային նաև այս համակարգի կենսագործունեությունը վերահսկող ուժեր, որոնք ինչ-որ առումով, թերևս, արդի խաղաղարար առաքելություններն են հիշեցնում:

Պետք է նշել, որ արդեն այս փուլում ձևավորվել էր հակառակորդի ու գրավված տարածքներում խաղաղ բնակչության նկատմամբ վերաբերմունքի երկու իրարամերժ մոտեցում: Առաջինի հետևորդները պատերազմելիս շարունակում էին հետևել անցյալի ավանդական «սուրբ օրենքներից» բխող մարդասիրությանը, իսկ երկրորդի կողմնակիցներն առաջնորդվում էին արտասովոր դաժան սովորույթներով:

Ի դեպ, դրա մասին որոշակի ակնարկ տեսնում ենք մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսի խեթերի ու ասորեստանցիների պատերազմելու սկզբունքների մասին նշող Ժ.Պիկտեի մոտ. «Խեթերի հանդուրժողականությունը բացարձակապես նման չէ ասորեստանցիների այն դաժանությանը, որոնց հաղթանակներն ուղեկցվում էին սարսափելի գազանություններով» [6, c. 11-13]:

Բնավ պատահական չէ, որ համաշխարհային պատմության մեջ վկայված հնագույն ռազմական դաշինքներից մեկը կնքել են մ.թ.ա. XIV դարում Խեթական պետության Սուպիլուլիումա II և Հայասա-Ազզիի Հուզաննա թագավորները: Երկու երկրները պետք է, որ էական խնդիրներ չունենային պատերազմելու կամ դաշնակցելու սկզբունքների ընտրության

ժամանակ:

Հատկապես կարևոր է, որ կողմերը պահպանում են ժամանակակից ՁԸԻ հիմնարար դրույթներին համահունչ հարաբերությունների կարգ: Հայասան հանդես է գալիս որպես իր հզորության գագաթնակետին հասած Խեթական պետությանը հավասար իրավական կողմ, թեև ակնհայտ էր, որ խեթերի ռազմական հզորությունը պետք է ավելի մեծ լիներ:

Ռազմական դաշնակցության պես բարդ ասպարեզում որպես լիիրավ կողմ հանդես կարող էր գալ միայն ձևավորված ռազմաիրավական համակարգ ունեցող պետությունը, որում ճշգրտված էին ինչպես հակառակորդի, այնպես էլ դաշնակիցների նկատմամբ պարտավորությունները և իրավունքները:

Հենց այս շրջանին է վերաբերվում ռազմագերիների իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կարգի (նրանց փոխանակման և այլն) մասին առաջին գրավոր տեղեկություններից մեկը: Ռազմագերին դառնում է Հայասա-Ազզիի պատերազմի իրավունքի օբյեկտ [7, էջ 38]:

Հայասա-Ազզիից ժառանգված ռազմաիրավական միտքը հետագա զարգացում ստացավ դեռևս մ.թ.ա. IX-VI դարերում, Արարատյան թագավորության ժամանակաշրջանում: Արգիշտի Ա (մ.թ.ա. 786-764 թթ.), Սարդուրի Բ (մ.թ.ա. 764-735 թթ.) և Ռուսա Ա (մ.թ.ա. 735-714 թթ.) թագավորների արձանագրություններում հակառակորդի զերիների նկատմամբ ներողամիտ վերաբերմունքի ու պարտված հակառակորդի իրավունքները հարգելու օրինակներ ենք տեսնում [8, c. 187-291].

- «… Արգիշտին ասում է… Դիաուեխի ցեղի արքային (ես) ստրկացրի, ազատեցի, հարկի տակ [դրեցի] (իշխանական պայմաններով)»:
- «… Ես (Սարդուրին) նրան բարեխիղճ վերաբերվեցի, նստեցրի (թողեցի) ես նրան իր տեղում, խնայեցի ես նրան՝ հարկ վճարելու պայմանով…»:
- «Ռուսան Սարդուրիի որդին ասում է. Ուրզանա արքան Արդինի քաղաքի (Մուսասիր) եկավ առջևս: Վերցրեցի (ինձ վրա) նրա ամբողջ զորքը կերակրելու հոգսը»:

Դժվար չէ նկատել շուրջ երեքհազարամյա հնություն ունեցող այդ տողերի հեղինակների կողմից կիրառվող պատերազմների նորմերի հարազատությունը 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի III կոնվենցիայի (հոդված 2, 4, 12-15, III մասի ամբողջ I բաժինը) պահանջներին[1]:

Վերը թվարկված արձանագրությունները գրվել են յոթանասուներկու

[1] Տե՛ս 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները, ԿԽՄԿ, Ե., 1999:
Այսուհետև ժնևի կոնվենցիաների հոդվածները կտրվեն ըստ վերը նշված ժողովածուի՝ «ԺԿ» (կոնվենցիաների հերթականությունն ըստ ընդունված կարգի I-IV, իսկ լրացուցիչ արձանագրությունները՝ նաև «Լ» նշումով՝ ավելացնելով լրացուցիչ արձանագրության թիվը): Վերջում նշվում է հոդվածի թիվը:

տարի թագավորած երեք թագավորների կողմից: Ակնհայտ է, որ գրավոր տեղեկությունների պակասն է պատճառը, որ մեր մյուս թագավորների

Սալմանասար Գ-ի (մ.թ.ա. 859-824թթ.) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքի մասին արձանագրության գծապատկերը

ռազմական գործունեության այս կողմի մասին մենք գրեթե ոչինչ չգիտենք: Նկատենք, որ Արարատյան թագավորությունն իր գոյության համար պայքարում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ արդեն մոռացվում էր մ.թ.ա. III հազարամյակում ձևավորված միջազգային իրավունքի համակարգը, և Ասորեստանի բանակի դաժանությունները կարծես բոլորին ստիպել էին հրաժարվել հակառակորդի նկատմամբ մարդասիրության անգամ ձևական դրսևորումներից:

2. Հայ ժողովրդի պատերազմելու սկզբունքները (IV-IX դդ.)

Հազարամյակներով կուտակված փորձն ամբողջացվեց դեռևս IV դարում հայ զինվորականության պատվո վարքականոնում (կոդեքսում): Այն մեզ է հասել V դարի հայ պատմիչների աշխատությունների շնորհիվ և վկայում է, որ զինված պայքարի սկզբունքների ընդհանրացումը սկսվել էր էլ ավելի վաղ անցյալում:

Պատահական չէ, որ առաջին իսկ հոդվածից (նրանում պահանջվում էր ծառայությունում լինել անձնուրաց ու հայրենիքին ծառայել հավատար-

մորեն) անմիջապես հետո պահանջվում է. «Ասպետական պատվի ու համարումի («քաջի անվան») անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով» (հոդված 2) [9, էջ 8-9]:

Վերոհիշյալ «քաջի անվան» պահպանման կանոնների մեջ մտնում էր նաև հակառակորդին ինչպես մինչև մարտը, այնպես էլ մարտից (գերելուց) հետո պատշաճ վերաբերվելու հարցը[1]: Զինվորականների գործողությունների տրամաբանության հիմքում դրվում էր «քաջի» բարձրությունից թույլերի հետ վարվեցողության ասպետական կարգը: Հատկանշական է, որ դրա օրինակը տեսնում ենք նույն IV դարում:

370թ. հայոց բանակը՝ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, ծանր պարտության մատնեց Սասանյան Պարսկաստանի Շապուհ II թագավորի (309-379թթ.) բանակին: Մարտադաշտից ճողոպրած Շապուհը մի կերպ կարողացավ ազատվել հետապնդումից ու փրկել կյանքը, սակայն գերվեց նրա կանանոցը:

V դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը գրում է. «Հայոց Մուշեղ զորավարը... (կանանց-Ս.Մ.) ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետնից: Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ» [10, էջ 291] (հմմտ. ԺԿԼ I, 76, կետ 1):

Հայոց սպարապետի արարքն առավել բարձր արժեք է ստանում, քանի որ բազմիցս գովերգվել է Իսոսի ճակատամարտից (մ.թ.ա. 333թ.) հետո Ալեքսանդր Մակեդոնացու (մ.թ.ա. 336-323 թթ.) վարքագիծը: Ալեքսանդրը խնայեց Աքեմենյան Դարեհ III թագավորի (մ.թ.ա. 336-330 թթ.) գերված ընտանիքի անդամների կյանքը և հրամայեց հարգանքով վերաբերվել կանանց [11, էջ 68-73, 12, էջ 303]:

Եթե Մակեդոնացու արարքը դիտելու լինենք նրա քաղաքական նպատակների տեսանկյունից, ապա մարդասիրական առումով այն այդքան էլ «շքեղ» չի լինի [13, էջ 10]: Ալեքսանդրը նախ իրեն հայտարարեց Դարեհի ժառանգների խնամակալ, ապա՝ նաև Աքեմենյանների ժառանգորդ, որը նորանոր նվաճումներ կատարելու համար իրավական հիմքեր էր ստեղծում [14, էջ 7-18]:

Մուշեղ Մամիկոնյանի պարագայում տեսնում ենք մի շարք առավելություններ, որոնք մեզ հիմք են տալիս պնդել, որ գործ ունենք պատերազմի վարման միանգամայն այլ կանոնների հետ.

- Շապուհի գերված կանայք չանարգվեցին, թեև կանանց սպանությունը կարող էր տեղի ունենալ որպես վրեժի արտահայտություն (ընդամենը մեկ տարի առաջ, Արտագերս ամրոցը գրավելով, պարսիկնե-

[1] Համեմատի՛ր, Ведение военных действий, Сборник Гаагских и иных международных документов, изд-о МККК, М., 2001, с. 27 (Հաագայի 1907թ. հոկտեմբերի 18-ի (IV) կոնվենցիայի հավելված, հոդված 23): Այսուհետև՝ «ՀԿ IV»: Տե՛ս նաև ԺԿԼ I, 36: [9]

ը գերել, ապա՝ նաև սպանել էին Հայոց թագուհի Փառանձեմին, որն, ի դեպ, դրանից անմիջապես հետո թագադրված Պապի (370-374 թթ.) մայրն էր) (հմմտ. ԺԿ III, 5 և 13: ԺԿԼ I, 44),

- կանայք ոչ թե պահվեցին «պատվավոր» գերության մեջ, այլև ազատ արձակվեցին,
- կանանց վերադառնալու դիմաց քաղաքական կամ ռազմական պահանջներ չդրվեցին, թեև հայոց սպարապետը հետագայում քննադատվում էր, քանի որ Արևելքում ընդունված ավանդույթի համաձայն՝ Շապուհն իր «պատիվը» փրկելու համար պետք է համաձայներ թեկուզ նվազագույնին՝ զորքերը Հայաստանից դուրս բերելուն (հմմտ. ԺԿ IV, 134):

Կրկին հանդիպում ենք դեռևս մ.թ.ա. III հազարամյակից ծանոթ սկզբունքին: Հակառակորդի նկատմամբ հաղթանակի հիմքում դրվում է բարոյահոգեբանական գերազանցությունը: Հայոց բանակի սպարապետը ցույց է տալիս, որ նույնիսկ ռազմաքաղաքական ծանրագույն պայմաններում հայ զինվորը պահպանում է բարոյական սկզբունքները:

Արդեն վաղ միջնադարում էապես հստակեցվում էին հակառակորդի մասին պատկերացումները: Մասնավորապես, հակառակորդի բանակի մարտիկը (կոմբատանտը) ևս հստակորեն տարանջատվում էր տվյալ ճակատամարտին անմիջական մասնակցություն չունեցողներից:

Դրանցից ուշագրավ է Զենոբ Գլակ Ասորու և Հովհան Մամիկոնյանի անունով հայտնի «Տարոնի պատմության» մեջ Սմբատ Մամիկոնյանի գլխավորած ուժերի կողմից պարսկական մի զորաբանակի ջախջախման նկարագրությունը [15, էջ 89-91]: Մեծաթիվ հակառակորդին հաղթելու նպատակով նա ուժերի մի մասը շարեց մարտակարգով, իսկ մյուսը գիշերը գաղտնի դիրքեր գրավեց նախօրոք կազմակերպված թաքստոցում ու մարտադաշտի եզրին գտնվող բլրի հակառակ կողմում: Ապստամբների ուժերի միայն կեսին հանդիպելով՝ պարսիկները ճակատային գրոհ սկսեցին նրանց ուղղությամբ, բայց շուտով երեք կողմից ընկան հարվածների տակ ու ջախջախվեցին: Մարտից հետո Սմբատ Մամիկոնյանը հրամայեց ազատ արձակել պարսկական բանակի չորս հարյուր ուղտապաններին, թեև հաղթող կողմի իրավունքով՝ «նրանցից վերցրեց հազար քառասունչորս ուղտ և ութ հազար ձի ու ջորի» (հմմտ. ԺԿ III, 18):

Գերված ուղտապաններին ազատելն էլ ավելի մեծ արժեք է ստանում, եթե նկատի ունենանք, որ այն կատարվեց արտակարգ դաժան ճակատամարտից հետո: Բավական է նշել միայն, որ մեծաթիվ զոհերի պատճառով մարտադաշտի եզրի բլուրը ճակատամարտից հետո ժողովուրդը կոչեց Մահու բլուր:

Հայտնի են դեպքեր, երբ պարտված հակառակորդի վիրավոր զինվոր-

ների նկատմամբ հոգատարություն են դրսևորել նաև հայ կանայք: Օրինակ՝ 703թ. վաղ գարնանը հայկական բանակը Արաքս գետի ափին՝ Վարդանակերտ ավանի մոտ, Սմբատ Բագրատունու գլխավորությամբ ծանր պարտության մատնեց արաբական զորքերին: Մարտադաշտից փախչող արաբական զորամասերը փորձեցին անցնել սառցակալած Արաքսը, սակայն գարնանային արևից բարակած սառույցը կոտրվեց: Փախչողների միայն փոքր մասը (երեք հարյուր հոգի) կարողացավ խուսափել հետապնդումից ու ապաստան խնդրեց Վանանդի կողմերից մեկի հայ իշխանուհուց՝ տիկին Շուշանից, որն աղերսանքով դիմեց նրանց հետապնդող Սմբատ Բագրատունուն ու խնդրեց չկոտորել նրանց [16, էջ326-328]: Շուշան իշխանուհին կապել տվեց թշնամու վիրավորների վերքերը, նույնիսկ գրաստ տրամադրեց նրանց համար և ուղարկեց խալիֆա Աբդ ալ-Մալիքի (685-705թթ.) մոտ (հմմտ. ԺԿԼ I, 8: ԺԿ I, 15):

Ռազմական իրավունքի մասին հայ ժողովրդի ունեցած հավաքական մտածողությունն ուսումնասիրելու լավագույն օրինակը «Սասնա ծռեր» հերոսավեպն է:

Էպոսում բոլոր չորս սերունդների ներկայացուցիչներն էլ հայրենի հողի պաշտպանության համար պայքարի մեջ են, իսկ Դավթի գործելակերպը հայ մարտիկի առավել տիպական բնութագիրն է, հայ ժողովրդի բնավորության ու ակնկալիքների խտացումը: Այդ պատճառով կանգ կառնենք Դավթի կերպարի վրա, որում ամբողջացած են հայ զինվորի պայքարի սկզբունքները [17, էջ 38-40]:

Նույնիսկ ոխերիմ թշնամու դեմ կռվելիս Դավիթն աշխատում է իր համար չստեղծել առավել շահավետ պայմաններ. հանկարծակի չի հարձակվում չնախապատրաստված հակառակորդի վրա [17, էջ 230] (հմմտ. ԺԿԼ I, 37): Թշնամու բանակի դեմ գրոհելուց առաջ նա չի մոռանում կանգնեցնել, սանձահարել իր ձին և ազդարարել, որ թշնամին արթնանա, զենք վերցնի ու պատրաստվի կռվելու: Վարվեցողության այս նորմերն առավել բնութագրական են, եթե նկատի ունենանք նաև թշնամու մեծաթիվությունը:

Պակաս ուշագրավ չէ Մըսրա Մելիքի հետ մենամարտի տեսարանը: Մելիքն արդեն երեք անգամ հարվածել է մկունդով, իսկ Դավիթը Մելիքի մորն է բաշխում առաջին զարկը: Նույնիսկ իմանալով, որ մենամարտը տղամարդուն վայել շարունակելու փոխարեն Մելիքը հորի խորքն է մտել, վրան քաշել քառասուն գոմեշի կաշի ու քառասուն ջրաղացքար, նա երկրորդ զարկն էլ բաշխում է թշնամու քրոջը:

Իր մարդասիրությամբ է Դավիթը ժողովրդի գիտակցության մեջ հակադրվում Մելիքին: Դավիթը հնարավորություն ունի մեկ հարվածով ավարտելու պատերազմը (Մելիքը խոր քուն էր մտել և, հետևաբար, խոցելի

էր), սակայն նույնիսկ անկախ նրանից, թե մենամարտի համար հակառակորդից ուժեղ է, թե թույլ՝ այդ մասին չի էլ մտածում:

Այդ ամենն՝ այն դեպքում, երբ պատերազմին նախորդած Կոզբադինի հարկահանության մասին կարելի է պատկերացում կազմել վերջինիս ելույթից [18, էջ 211]: Թվարկվող ավարի մեջ առաջինը, հետևաբար, ամենաարժեքավորը համարվում են կանայք և աղջիկները (հմմտ. Շ.Շահամիրյան, «Որոգայթ փառաց», հոդված 319: ԺԿ III-ի և IV-ի մաս I-III-ի պահանջներին, ինչպես նաև՝ ԺԿԼ I, մաս IV, գլուխ II):

3. ՄՄՐ ժամանակակից նորմերը և հայոց օրենսդրական ժողովածուները

Հակառակորդի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի նման բարձր դրսևորումներ ունեցող հայ ժողովրդի ռազմահրավական մտքի պատմության զարգացման մյուս աստիճանը դարձան նաև պատերազմների իրավունքի օրենսդրական ձևակերպումները տարբեր ժամանակաշրջանների օրենսդրական ժողովածուներում:

Միջնադարի հայ հասարակական-մշակութային կյանքի ակնառու գործիչներից մեկի՝ Ներսես Շնորհալու 1166թ. գրած «Թուղթ ընդհանրականի»՝ հայ զինվորականությանը նվիրված գլխում (VI-ում) ասվում է հետևյալը. «անխղճորեն և անիրավաբար որևէ մեկին մի՛ նեղեք» կամ «դահիճների օրենքով հանդես չգաք» (հմմտ. ԺԿԼ I, մաս III, բաժին I) և այլն: Շնորհալին պատվիրում է նաև. «մարմնական զենքից ավելի հավատքի զենքով սպառազինվեք … որպեսզի պատերազմներում աստված... թշնամիներին հալածի ձեր առջևից» [19, էջ 72-100]:

Այսպիսով, հայ մարտիկի պահվածքը միայն խիստ որոշակի դեպքերում է աստվածահաճո գործ համարվում: Ընդգծենք, որ Շնորհալին վերը նշվածը չի գրում բանակում թերությունները հարկադրանքի միջոցով վերացնելու համար պայքարելու նպատակով: Ավանդույթը վաղուց արդեն հիմնավորվել էր: Այն պարզապես արձանագրվում ու օրենսդրական ձևակերպում է ստանում:

Հայոց իրավական մտքի փայլուն ամփոփումը դարձավ Մխիթար Գոշի (մոտ 1130-1213թթ.) «Դատաստանագիրք Հայոցը», որը հսկայական ազդեցություն է ունեցել հայ իրավական մտքի հետագա զարգացման վրա [20]:

«Դատաստանագրքում» Գոշը ոչ միայն անթույլատրելի է համարում հակառակորդ երկրի խաղաղ բնակչության նկատմամբ ատելության անգամ աննշան դրսևորումը, այլև առանձին հոդվածով (հոդված 110) քննարկում է գերված այլազգի կանանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը,

ընդհուպ մինչև նրանց հետ ամուսնանալու կարգը (հմմտ. Շ. Շահամիրյան, «Որոգայթ փառաց», հոդվածներ 319 և 324, ինչպես նաև՝ ԺԿ IV, ԺԿԼ I, 76, կետ 1): Կիլիկիայի Հայկական պետության «Դատաստանագրքի» հեղինակ Սմբատ Սպարապետը կրկնում է այս դրույթը (հոդված 115):

Գոշը չի մոռանում քննարկել նաև պատերազմի ժամանակ զորակոչի ենթակա տղամարդկանց իրավունքների հարցը: Մասնավորապես, «նոր ամուսնացածներին պատերազմ չտանելու մասին» (հոդված 123) դրույթ կա (հմմտ. հերոսավեպում Մելիքի կողմից Մըսրրում կատարած զորահավաքի կոչին): Փաստորեն մեզնից ութ դար առաջ հայ իրականության մեջ գործում էին նման մարդասիրական օրենքներ:

Այս առթիվ բավական է նշել, որ ժամանակակից զինված ընդհարումների իրավունքն արգելում է մինչև 15 տարեկան երեխաների հավաքագրումը զինված ուժերի կազմի մեջ: Հետևաբար, այդ տարիքը լրացած քաղաքացին կարող է համարվել կոմբատանտ և որպես այդպիսին ընկալվել հակառակորդի կողմից:

Արդեն XVIII դարում հայոց գիտական միտքն աշխարհին ներկայացավ մի այնպիսի ընդգրկուն աշխատությամբ, ինչպիսին Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացն» էր՝ ապագա հայկական պետության համար առաջարկվող սահմանադրությունը [21, c. 55]:

Շահամիրյանն աշխարհում առաջինը (ԱՄՆ Սահմանադրության ընդունումից վեց տարի առաջ) ստեղծեց սահմանադրություն, այն էլ Հնդկաստանում, մի պատմական դարաշրջանում, երբ Հայաստանը որպես ինքնուրույն պետություն գոյություն չուներ:

«Որոգայթ փառացում» պատշաճ տեղ է հատկացվում ապագա Հայաստանի զինված ուժերի ամենատարբեր հարցերի:

Գերիների նկատմամբ, հիրավի, XXI դարին արժանի վերաբերմունք ենք տեսնում նրանց պահպանելու կարգը (կերակուր, հագուստ, դեղերի ծախս) սահմանող պահանջներում (հոդված 315-318) (հմմտ. ԺԿ III, 43-45, 118, 119: ԺԿ IV, 31-33): Ընդ որում, նույնիսկ այն դեպքում, երբ այս մարդասիրությունը միակողմանի է, ու հակառակորդ երկիրը հրաժարվում է հոգալ իր թողած գերիների պահպանման հոգսերը, նրանց ինքնասիրությունը վիրավորող արարքների խստիվ արգելք է գործում (հմմտ. ԺԿ III-ի բոլոր հիմնարար նորմերի հետ): Առավելագույնը, որ թույլատրվում է՝ գերիներին «դատապարտել Հայաստանում ծառայական վիճակի», այսինքն՝ աշխատեցնել՝ սեփական աշխատանքով իր պահպանման ծախսերը հոգալու նպատակով միջոցներ հայթայթելու համար (հմմտ. ԺԿ III, բաժին III):

Պատերազմի ժամանակ մարդու իրավունքների ժամանակակից, անգամ ամենախիստ պահանջների պահպանման օրինակներ են պատերազ-

մի ժամանակ գործող հաղորդակցության (հոդված 321), հասարակական թղթակցության կարգի (հոդված 322) ու պաշարված բնակավայրերից դուրս գալու կարգի (հոդված 323) մասին հոդվածները: Քաղաքացիական (չպատերազմող) բնակչությանը զինվորականից տարբերակելու թերևս այսօր էլ չգերազանցված օրինակ է պատերազմի ժամանակ Հայոց աշխարհից օտարների դուրս գալու կարգը (հոդված 325) (հմմտ. ԺԿ IV, 35 և 48):

Գրավյալ տարածքներում հայոց բանակի զինծառայողների վարքը կանոնակարգվելու էր ոչ միայն քրիստոնեական ավանդույթներով, այլև օրենսդրորեն (հոդվածներ 319 և 324): Զուգահեռաբար քննարկվում են ինչպես առանց դիմադրության հանձնված բնակավայրերի (հոդված 387) քաղաքացիական բնակչության հետ վարվելու կարգը, այնպես էլ գրավված ամրությունների (հոդված 389) պահպանման խնդիրը (հմմտ. ԺԿ IV, 53):

390-րդ հոդվածն ուղղակի հավասարության նշան է դնում հակառակորդի՝ անձնատուր եղած բնակավայրերի խաղաղ բնակչության և հայոց պետության քաղաքացիների միջև՝ առանց նույնիսկ ձևական տարբերության (հմմտ. ԺԿԼ I, 51), իսկ 489-ում հակառակորդի գերի հանձնված զինվորներին սպանելու համար մահապատիժ էր սահմանվում (հմմտ. ԺԿ III, 13):

4. Ֆիդայական շարժման գաղափարական հիմքն ու ժամանակակից ՄՄԻ-ն

Վերը նշված դրույթների մի մասի գործնական կիրառության բազմաթիվ օրինակներ ենք տեսնում 1880-1900-ական թթ. թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի ֆիդայական (հայդուկային) պայքարի տարիներին:

Թուրքական իշխանությունների բարբարոսությունների հետ շփվելով հանդերձ՝ ֆիդայիները պահպանեցին նախնիների մարտավարության սկզբունքները:

Ֆիդային իրավունք չուներ սպանել ոչ միայն ծերերին, կանանց ու երեխաներին, այլև մարտական գործողությունների մեջ չներգրավված տղամարդկանց (հմմտ. ԺԿ III, 5, ԺԿ IV, 24): Հատկանշական է, որ այս կարգը վերահսկվում էր ֆիդայական պատվի դատարանների կողմից: Պայքարի գաղափարական հենքը չարատավորելու նպատակով ֆիդային ընդունված կարգից շեղվելու իրավունք չուներ ո՛չ մարտի ընթացքում և ո՛չ էլ նրանից հետո: Ֆիդայի դարձող նորեկը նախազգուշացվում էր, որ նա սկզբից նեթ իրավունք ունի հրաժարվել պայքարից, եթե վստահ չէ, որ կկարողանա այդ կարգի նույնիսկ ամենաանշան զանցանքից զերծ մնալ:

Սասունի ինքնապաշտպանական ջոկատների հրամանատար Հրայրը (Արմենակ Ղազարյան, 1864-1904թթ.) անգամ ամենաանշան ռազմական

զանցանքների նկատմամբ ծայրահեղ անզիջում դիրքորոշման համար իրենց իսկ՝ ֆիդայիների կողմից ստացավ «Ուրվական» պատվանունը, իսկ ժողովրդի հիշողության մեջ մինչև այսօր էլ մնում է որպես «Հրայր Դժոխք»:

Ֆիդայական «պատվի» դատարաններն իրենց գործունեությունը շարունակեցին նույնիսկ 1894-1896թթ. զանգվածային կոտորածներից հետո:

Առավել բնութագրական է ֆիդայական շարժման ամենամեծ գործողություններից մեկը՝ 1897թ. հուլիսի 25-ին շուրջ 270 ֆիդայիների ուժերով իրականացված Խանասորի[1] արշավանքը: Արշավանքի նպատակն էր հարվածել քրդական մազրիկ ցեղին, որն ակտիվորեն մասնակցել էր թուրքպարսկական սահմանի շրջանում հայ ֆիդայիների սպանությանը (Սբ Բարդուղիմեոսի վանքի և Գարահիսար լեռան մոտ): Մարտիկներին խստագույնս հրամայված էր չսպանել կանանց ու երեխաներին [22, c. 328]:

Արշավանքից առաջ հրամանատարները, բժիշկն ու քահանան մարտիկներին ոգևորելու համար նրանց են դիմում կարճ ելույթներով: Մարդասիրության կոչով հանդես է գալիս արշավանքի նախաձեռնողը՝ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան, 1867-1914թթ.: Հետագայում դարձավ ֆիդայական շարժման աչքի ընկնող ներկայացուցիչներից ու խոշոր տեսաբաններից մեկը): Նա իր ելույթը եզրափակեց հետևյալ խոսքերով. «Տղերք, վեհանձն եղէք դէպի տկարները… ձեռք չտաք կանանց և երեխաներին» [23, էջ 149-157]:

Մարդասիրական այս սկզբունքները, որոնք բնութագրական էին հայոց հայդուկային պայքարին, դրսևորվեցին նաև արշավանքի ընթացքում: Մազրիկ ցեղի ցեղապետ Շարաֆ բեյը կարողացավ փախչել՝ հագնելով կնոջ շորեր և իմանալով, որ նույնիսկ իրենց ընկերների վրեժը լուծելու հաստատակամությամբ արշավանքի ելած ֆիդայիները կնոջ վրա ձեռք չեն բարձրացնի:

Հայ մարտիկի մարդասիրական հայացքներում էական փոփոխություններ տեղի չունեցան նույնիսկ 1915-1916թթ. Մեծ եղեռնից հետո: Ֆիզիկական ոչնչացման եզրին հայտնված հայ ժողովուրդը խուսափեց ոչնչացումից, քանի որ բարոյական պարտություն չկրեց և չկորցրեց իր դեմքը: Այս ամենի ֆոնի վրա էլ ավելի է բարձրանում Մեծ եղեռնից ընդամենը երեքչորս տարի անց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հարավային շրջաններում ծավալված ընդհարումների ժամանակ հայկական զորքերի հրամանատար Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան, 1886-1955 թթ.) տված թիվ 14 հրամանի նշանակությունը. «Եղեք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղեք կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ» [24, էջ 9-10]:

[1] Խանասորի լեռնանցքը գտնվում է Կոտուրի լեռնաշղթայի հարավում: Այն Ուրմիա լճի ավազանը կապում է Վանա լճի ավազանին:

Եզրակացություն

Հայոց պատերազմների պատմությունը մարդասիրական սկզբունքների դրսևորումների բազմաթիվ այլ օրինակներով էլ է հայտնի: Դրանց վերլուծությունը թույլ կտա նոր լույսի տակ գնահատել մեր պատմական ժառանգությունը: Ժամանակն է, որ մեր գիտակցության մեջ կոտորվող հայի կերպարի փոխարեն արմատավորվի հաղթանակող և հաղթանակներից հետո հակառակորդին մեծահոգաբար ներում շնորհող հայի կերպարը:

«Միջազգային մարդասիրական իրավունք» առարկան համահունչ է հայ զորավարի (հրամանատարի) ու զինվորի պատմականորեն ձևավորված ոգուն, ազգային մտածելակերպին ու աշխարհայացքին: Հետևաբար, այդ առարկան ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների համակարգում ներդնելը ժամանակին համապատասխանող ու արդարացված քայլ է:

Տվյալ պարագայում գործ ունենք ոչ միայն միջազգային նորմերին ՀՀ ու նրա զինված ուժերի համապատասխանեցմանն ուղղված գործընթացի, այլև նախնիների հինգհազարամյա մարդասիրության ակունքներին վերադառնալու հետ:

Աղբյուրներ և գրականություն

1. *Սիմոնյան Ռ.,* Զինված ընդհարումների իրավունք, Ձեռնարկ ՀՀ ԶՈՒ Զինված ընդհարումների իրավունքի հրահանգիչների և ռազմաուսումնական հաստատությունների համար, Երևան, 2003:
2. *Սարկիսյան Ռ.,* Միջազգային մարդասիրական իրավունք, Ձեռնարկ ՀՀ ԶՈՒ հրամանատարական կազմի համար, Ե., 2002:
3. *Մովսիսյան Ա.,* Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, 1992:
4. *Մովսիսյան Ա.,* Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000:
5. *Մովսիսյան Ա.,* Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը. Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Ե., 1997:
6. *Пикте Ж.,* Развитие и принципы международного гуманитарного права, Курс прочитанный в июле 1982г. в Страсбургском университете, изд-во МККК.
7. *Ադոնց Ն.,* Հայաստանի պատմություն, Ե., 1972:
8. *Арутюнян Н.В.,* Корпус урартских клинописных надписей, Е., 2001.
9. *Այվազյան Ա.,* Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր), Ե., 2000:
10. *Փավստոս Բուզանդ,* Հայոց պատմություն, Գիրք Ե, բ, Ե., 1987:
11. *Արիանոս Փլաբիոս,* Ալեքսանդրի արշավանքը, գիրք 2, 11-14, Ե., 1987:
12. *Քվինտոս Կուրցիոս Ռուֆուս,* Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, III,

XI, 24-25, Ե., 1987:
13. *Օհանյան Մ.,* Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքը և Հայաստանը, Ե., 2003:
14. *Мамаев Д.,* Преступники и преступления с древности до наших дней. Заговорщики и террористы, Донецк, 1997.
15. *Հովհան Մամիկոնյան,* Տարոնի պատմություն, Պատճեն երկրորդ, Ե., 1989:
16. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. II, Ե., 1984:
17. *Հ. Օրբելի,* Հայկական հերոսական էպոսը, Ե., 1956:
18. Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Ե., 1981:
19. Թուղթ ընդհանրական Ներսես Շնորհալու, Անթիլիաս, 1977:
20. *Մխիթար Գոշ,* Գիրք դատաստանի, Ե., 1975:
21. *Шаамир Шаамирян,* Конституция Армении (проект) 1773г.: Армянское уложение законов для управления страной армянской, М., 1998.
22. Армянский вопрос, Энциклопедия, Е., 1991.
23. *Վարանդեան Մ.,* Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992:
24. *Գարեգին Նժդեհ,* Խուստուփյան կանչեր, Ե., 1993:

Հուլիս, 2004թ.

ПЯТИТЫСЯЧЕЛЕТНЯЯ ГУМАННОСТЬ

Сурен Мартикян

Резюме

В статье на основе анализа исторических фактов представлена эволюция международного и военного права в Армении. Показано, что соблюдение гуманистических норм при ведении боевых действий нисходит своими корнями к первым государственным образованиям в Армянском нагорье: Аратты (XXVIII-XXVII вв. до н.э.), Арманума (XXIV-XXIII вв. до н.э.), Хайаса-Аззи (XIV в. до н.э.), Араратского царства (IX-VI в в. до н.э.) и т.д.. Эти традиции нашли свое развитие и юридическое оформление в раннем средневековье (IV-V вв.) в виде Кодекса чести армянского воинства. В этом уникальном историческом документе содержалось требование о рыцарском отношении к противнику, в том числе попавшим в плен воинам. Согласно Кодексу, раненым солдатам противника оказывалась помощь, противником не считались не только женщины, дети, старики, но и непосредственно не участвующие в сражении мужчины. Классическим примером проявления на практике подобного отношения к противнику является поведение спарапета (главно-

командующего) Мушега Мамиконяна (в 370г.), который после битвы сохранил жизнь и честь членов семьи персидского царя Шапуха II. Рассматриваемые в этом аспекте исторические материалы заметно расширяют представления об истории международного и военного права в целом.

В исследовании особое внимание уделено сформировавшемуся в VIII-X веках героическому эпосу “Сасна Црер” (в русской переводческой традиции - “Давид Сасунский”). Известно, что эпос является проявлением собирательного мышления и менталитета народа. В этом контексте примечательны многочисленные примеры благородства на поле боя, проявляемого главным героем эпоса - Давидом Сасунским. В качестве примера приводится поступок Давида, когда он перед нападением будит спящее войско противника, чтобы те потом не обвинили его в “нечестности”.

В более поздних литературных памятниках, например в “Соборном послании” Нерсеса Шнорали (1166г.), к светским правилам добавляется и требование соблюдать христианские нормы поведения воинства. В “Армянском судебнике” Мхитара Гоша и “Судебнике” Смбата Спарапета (XII-XIIIвв.) воинам разрешается взять в законные жены женщин, проживающих на захваченных территориях. В “Капкане честолюбия” Шаамира Шаамиряна (XVIII в.) выдвигаются требования гуманного отношения к противнику и населению захваченных территорий, которые во многом схожи с требованиями целого ряда положений Гаагских и Женевских конвенций.

Армянские воинские традиции соблюдались и в годы борьбы против проводившей политику геноцида Османской Империи (Турции). В армянском повстанческом движении были созданы суды воинской чести, которые рассматривали поведение бойцов с точки зрения нравственности и гуманизма (запрещалось убивать турецких женщин, детей, стариков и невоюющих мужчин, тогда как армянское население уничтожалось поголовно). Об особенностях отношения повстанцев к противнику свидетельствует тот примечательный факт, что суды чести функционировали и после геноцида армян в Турции 1894-1896гг. и 1915-16гг., когда в общей сложности было уничтожено более 2 млн. армян. Специально анализируется значение приказа N14 от 30 ноября 1919 года, отданного командующим войсками южных районов Республики Армения Гарегином Нжде, согласно которому от регулярных войск требовалось соблюдать все нормы гуманного отношения к противнику.